ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

"7" օգոստոսի 2013թ. № 73-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ, ՀԱՆՁՆՈՒՄ - ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի ա/ ենթակետով, <<Հաշվապահական հաշվառման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2013թ. օգոստոսի 6-ի <<Կապանի թիվ 1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ընտրության՝ օրենսդրության պահանջների համապատասխանության և ընտրված տնօրեն Լևոն Մարգարյանի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու մասին>> N 114-Ա որոշման, **կ ա ր գ ա դ ր ում ե մ՝**

1. 2013թ. օգոստոսի 7-ց լուծել <<Կապանի թիվ 1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Հասմիկ Համբարձումյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. Կազմակերպությունում ակտիվների և պարտավորությունների գույքագրում, հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Կոզմանով Կառլեն	Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)
Հարությունյան Գալյա	Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի 1-ին կարգի մասնագետ
Մարգարյան Լևոն	<<Կապանի թիվ 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ տնօրեն (ընդունող)
Համբարձումյան Հասմիկ	<<Կապանի թիվ 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ տնօրենի պաշտոնակատար (հանձնող)

3. Հանձնաժողովին՝ գույքագրման և հանձման-ընդունման աշխատանքներն ավարտել 3-օրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

4. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2013թ. օգոստոսի 7
ք. Կապան